ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 3 դեկտեմբերի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Գյուլումյանի

Քննության առնելով Նեմաթոլլահ Քոչայիի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Նեմաթոլլահ Քոչային (դիմումը Սահմանադրական դատարան վերստին ներկայացվել և մուտքագրվել է 2019 թվականի նոյեմբերի 21-ին) դիմել է Սահմանադրական

դատարան՝ խնդրելով. «…որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի և/կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Ըստ դիմողի՝ վերջինիս փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակը բացառում էր նրա քրեական պատասխանատվությունը ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով: Դիմողը նշում է, որ ՀՀ-ում ապաստան հայցող է համարվել 2017 թվականի հուլիսի 25-ից, և այդ պահից սկսած՝ «Դիմողի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը և այնուհետև նաև կայացված մեղադրական դատավճիռը խախտել են «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. Կոնվենցիան, ՄԻԵԿ-ի 6-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության 72-րդ, 81-րդ հոդվածների, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները»: Ըստ դիմողի՝ «Սույն գործով Դիմողների նկատմամբ անմիջականորեն կիրառված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, դատարանների կողմից դրան տրված մեկնաբանության շրջանակներում, ակնհայտորեն հակասել են ՀՀ Սահմանադրության պահանջներին՝ զրկելով Դիմողի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման հնարավորությունից՝ խախտելով նաև սույն դիմումում վկայակոչված սահմանադրական մյուս իրավունքներն ու սկզբունքները»:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոններն ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանի որ դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Վերջիններս միտված են Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը, դատական պաշտ-

պանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ վերջնական դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2019 թվականի ապրիլի 29-ին, իսկ Նեմաթոլլահ Քոչայիի՝ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել 2019 թվականի նոյեմբերի 6-ին, երբ արդեն **լրացել էր Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետը:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Նեմաթոլլահ Քոչայիի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

3 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-64